

ԲՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԱՊՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկան	12 ֆր.
վեցամսայ	7 "
Արտասահմանի	
համար սարեկան	15 ֆր.
վեցամսայ	8 "
Անտիկայի համար	
սարեկան	3 ֆր.
վեցամսայ	1.50 "

Ծանուցում ենք որ 40 սանթիմիտ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմիտ է: Իրեհին ու էլի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ:

Վառույթի համար ձեռք 40 սանթիմիտ է

ՇԱԲԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱՏ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ БАНАРЯТЪ

Նամակ եւ որամ զո կե իւրացուցանու հո ցեղ

Редакция на вѣстникъ "Шаржувъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ տուիր

ՇԱԲԱՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

ՊԵՏՅՈՒՆ ԳԻՐՔԸ

Ուրախ ենք ծանուցանելու որ Վիլհելմայի Միտիթարեանց տպարանը համաձայնած ըլլալով Վարդոյի հետ տպագրական ծախքերու մասին, Պետոյի Գրքին հրատարակումը պիտի յսկսի յոռաջիկայ Յունուար կամ Փետրուար ամիսներուն:

ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ

Յառաջիկայ կիրակի, 4 դեկտեմբերի պիտի ունենայ Սօֆիայի մէջ մակեդոնացի յեղափոխական ներքին կազմակերպութեան հըսկայ ժողովը, որ, ինչպէս կանխաւ ծանուցուած է, յասնակի հանգամանք չի պիտի ունենայ այս անգամ: Արտաքին կազմակերպութիւնն ալ պիտի մասնակցի համագումարին, ու միեւնոյն ատեն պուլկար քաղաքական բոլոր կուսակցութիւնները, իրենց պատուիրակները պիտի գրկեն հոն: Համագումարին գլխաւոր նպատակը պիտի ըլլայ այս անգամի մի ձուլել բոլոր մակեդոնացի յեղափոխական ուժերը, միակ ուղիով ձգել ընդգրկել, որ հաւասարապէս ընդունուի ներսի և դուրսի գործիչներէն ինչպէս նաեւ բոլոր պուլկար կուսակցութիւններէն: Ճիշդէն խելացի ու փրկաբար քայլն է որ կանեն, իրենց այս գործումով, մակեդոնացիները: Վերջին տարիներուն մակեդոնացի յեղափոխականներու մէջ տխուր պառակտումներ յառաջ եկած էին: Ներքին կազմակերպութիւնը ստակալի ատելութեամբ կը վերաբերուէր դուրսի գործիչներու հանդէպ, զանոնք չէր ընդուներ իբր անկեղծ յեղափոխականներ Մակեդոնոյ շահերուն նուիրուած: այլ կը նկատէր իբր գործիք պուլկար կառավարութեան քաղաքական էնթրիկներուն: Հակառակութիւնը այն աստիճան յառաջ գացած էր որ,

ներքին կազմակերպութիւնը նոյն իսկ զէնք վերցուց դուրսէն Եկոզներու վրայ և յեղափոխական հերոսախմբերը փոխանակ թուրք զինուորին դէմ քայլելու, սկսան սահմանը անցնող պուլկար խումբերու վրայ յարձակել, իբրբարու դէմ կռուիլ ու իրար շարդել:

Իրողութիւնը խիստ տխուր ու ցաւալի էր. բայց բարեբախտաբար երկար չի տևեց:

Մակեդոնացի գործիչները ունեցան այն ցանկալի խոհեմութիւնը որ իրենց փրկութեան գործը ժամ առաջ պիտի ապահովէ: Ահա քանի մը օր ալ, ու Մակեդոնոյ անունով կռուող բոլոր զինուորները մէկ գործակի տակ պիտի հաւաքուին ու մէկ ուղիով թեմապ պիտի ընդանան: Հակառակութիւնները պիտի չքանան, անձնականութիւնները պիտի լսեն, թշնամին միայն թուրքը պիտի ըլլայ, ու Մակեդոնացիները կուռօրէն համախմբուած պիտի կեդրոնացնեն իրենց ամբողջ ուժը միայն ընդհանուր թշնամիին՝ թուրքին դէմ:

Յեղափոխականները ոյժն է որ այս հսկայ քայլը առնել կուտայ մեր բախտակից ժողով գին: Առողջ ու երիտասարդ մակեդոնացի սրտերը, ճգնաժամի այս վճռական րոպէին, կը մոռնան իրենց ճգնաժամները, կը բռնեն հասարակաց շահին գերակշռութիւնը, ու հայրենիքի փրկութեան համար կը համախմբուին անվերապահօրէն, կը սեղմեն իրենց շարքերը, կը նորոգուին ու կը պատրաստուին համերայնօրէն Մեծ Կռուին: Ամբողջ պուլկար ժողովուրդը, իր բոլոր քաղաքական կուսակցութիւններով, ուժ կուտայ այս խելացի ձեռնարկին:

Իսկ մե՞նք ի՞նչ կրնենք կամ ի՞նչ կը մտածենք ընել:

Ուր որ աչքերնիս գարձենք, մեր առջեւ պիտի պարզուի տառապող, սպառող, արիւնջուայ

հայութեան մը քստմեցուցիչ պատկերը, ու անոր դէմ պատկերը շողորդներու, ինքնահաւաններու, արգահատելի խեղճերու, Եսամուլներու, մենաշնորհեալ գործիչներու, ամբարհաւած ու շիրք պատգամախօսներու, սրտք ամէն ձիրք ու ամէն արժանիք միմիայն իրենց անձին ու զիրենք դարպասողներու մէջ կը տեսնեն, որոնք յաւակնութիւնն ունին իրենց ողորմելի ուժերով և խումբ մը հետեւողներով ամբողջ ազգի մը փրկութիւնը ապահովելու:

Աս ալ մեր ցեղային նկարագիրն է:

Մեր հանրային կեանքով մենք միջակէն ալ աւելի վար բան մը կը ներկայացնենք, ու այս պատճառաւ, միշտ կը սիրենք գործ ունենալ միջակութիւններու հետ: Ամէն բանի մէջ կը մտենք, ամեն խնդիր կը յուշենք, գործունէութեան ամէն ճիւղերու ձեռք կը զարնենք. բայց և ոչ մէկուն մէջէն չենք ընդ շնորհքով դուրս կելլենք: Որովհետեւ հաւատարմին մեր նկարագրին, ամէն տեղ կը փնտռենք մեր մակարդակէն չի տարբերող միջակութիւններ: Այս պատճառաւ ալ մեր հանրային գործերը միշտ անյաշողութեան կը մատուին: Անորոշութիւն, անվճռակաւնութիւն, թուլութիւն, տեսակ մը սիրողի մեղկութիւն որ շուարու մի կը մտենայ աւելի, ճիգեր զիբար գերազանցելու ոլորտաճամբաներով, ու շացաններու հեքոտ աճապարանքով:— Թիրոյ միջակութեան այս ընդհանուր գործ յուշուի բայց և ոչ մէկը յաջողի մեր մէջ:

Վերահաս ազդեանները ժամանակ չեն ձգած մեզի որ դեռ երկար տատամսինք մեր ընտրելիք ապագայ ուղիքին մէջ: Ժամանակը հետզհետէ ցոյց տուաւ որ հայ ազգը դեռ չէ գտած հաստատ ու ամուր կռուան մը որուն վրայ իրաւամբ կարենայ հիսել իր փրկութեան շէնքը: Պարագա-

ները յստակօրէն ապացուցին որ մեր յեղափոխական կազմակերպութիւնները իրենց թոյլ ուժերով շատ հեռու են այդ կռուանը ըլլալէ:

Սակայն պէտք է կռուան մը ըստեղծել:

Մակեդոնացի ժողովրդին ներկայ ձեռնարկը թո՛ղ օրինակ մը ըլլայ մեզի: Մենք ալ կրնանք կուռ, համախումբ ու հաստատուն հսկայ յեղափոխական մարմին մը ստեղծել, եթէ քիչ մը մոռնանք մեր եսը ու զոհենք մեր կիրքերը, ժամանակը, որ կուռքերը կը խորտակէ ու երբեմն աստուածները անդունդներէն վար կը գահավիժէ, արդէն վերջի վերջոյ պիտի ընէ այն՝ ինչ որ տարապայման եսերը կուռն արգիւլել այսօր: Բայց ինչո՞ւ մեր կենսական գործը ճակատագրին քրմահաճոյքներուն յանձնենք:

ՇԱՂՊ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆԱԿԱՆ ԱՐԱՐԻՆ
 ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ
 —○—
 ԸՆԴՉ. ԴԱՏԱՍԱԶԻՆ ՃԱՌԸ
 —)○(—
 (Սանզու մէի-էֆքեարալէն քաղուած)
 (Շար. Ասխ. Գիւլէն)

Ժողիս այս ամէնքը խոստովանելէ ետք յայտնեց թէ առջի խոստովանութիւններուն մէջ յիշատակուած Սամուէլ Ծայն և անոր աղջիկը Բուպինա Ծայն և զարձեալ Լիբա Բիբա և ասոր կիներ Սոֆի Բիբա Հայ զաշնակցական յեղափոխականներու խումբին, այսինքն ժընէվի, Թիֆլիսի և Պուլկարիոյ մէջ գտնուած Հայ յեղափոխականներէն և Պուլկար յեղափոխական քոֆիէներէն խառն, անցած Փետրուարին կէսին, Սօֆիայի մէջ գաղտնաբար գումարուած նիստին մէջ տրուած որոշումները գործադրելու համար, այս չորսը անցած տարուան Հոկտեմբերի սկիզբները Պուլկար եկած են: Հոս Վառապաբուհ Բէնտիբեանի միջնորդութեամբ, Ժողիս ասոնց հետ տեսակցելով այդ չորս յեղափոխականներուն հետապն-

դեղին գաղափարներուն և անիծա-
պարտ զգացումներուն ինքն ալ հա-
մարտ գտնուած է իր բնական զգա-
ցումներուն անսալով: Այս միջոցնե-
րուն, զգալով որ Գրեգորը ո՛րքե՛ր ի-
ջեւանող Սամուէլ Պայն և աղջիկը
ուշադրութիւն չգրաւելու համար
ձածուկ տեղ մը գտնելու միջոցները
կը մտածեն, ինք (ժողով) զանոնք
ընդունած է իր շնորհակամ արարիւ-
մանին մէջ և անոնց երկու սենեակ
ու սրահ մը յատկացուցած է: Սակէ
զատ Լիբա Ռիբս և ամուսինն ալ
ճիշդ նոյն պահուն, Բերա, Եկմէնիճի
փողոց, Աւստրիացի Խրիսթիանովիչի
տան մէջ մասնաւոր հարկաբաժին մը
վարձած ու հոն փոխադրուած էին:
Ահաւասիկ այս կարգի պատրաս-
տութիւններու և եղեռնական ձեռ-
նարկներու միջոցաւ ժողովուրդը
հայրենիքափոխականներու գաղափարը
տարածելու եւ ընդհանրացնելու և Աստու-
ուած մի արասցէ, եղեռնագործու-
թիւն մը ձրագրելու և գործադրելու
համար, իր տունը յատկացուց Սա-
մուէլ Պայնի նախագահութեամբ
գումարուած ժողովներու, ուր մինչ-
եւ ատուները խորհրդակցութիւն-
ներ տեղի ունեցան և այս խորհրդ-
ակցութիւններուն մասնակցեցան
վերջիններս անպիտ, անտորուս և
յարակ ձայնով Գեօրջ Արիսթիտի և
Վահան ըստած՝ Սիլվիո Ռիչին, Քարլ
Սուվանովիչ, Թրասա Եուվանովիչ և
Տիկին Շքովա, որ նոյն պահուն
Քարլի հետ միասին կը բնակէր Բե-
րա, Թագսիմ, Թագապետական հի-
ւանդանոցին շուրջը: Նաեւ Լիբա
Ռիբս, կինը Սօֆիա, Օրիորդ Բու-
պինա, և Վասիլապուր և ուրիշ մէկ
երկու անձինք ալ որոնց անունն ու
ինքնութիւնը չգիտեր, ժողովս խոս-
տովանեցաւ թէ այս անձերուն ա-
մէնքն ալ կը մասնակցէին իր տանը
մէջ գումարուած գիշերային ժողովնե-
րուն և Լեկերութեան կեդրոններէն
խրեց հասցէին եկած նամակները կը
քննէին: Այս խորհրդարարական մաս-
նաճիւղին անդամները ոճրին պատ-
րաստութեան եղանակին եւ անոր
վերաբերեալ մանրամասնութիւնն
րուն վրայ մաս մաս մանրազնին ու-
սումնասիրութիւններ կը կատարէին,
արուն մասնակցած էր նաեւ ինք ժո-
ղովս:

Ժողովս շարունակելով պատասխա-
նել իրեն ուղղուած հարցումներու,
յայտարարեց թէ ինք թէեւ ուղղակի
չէ մասնակցած ատոնց խորհրդակցու-
թիւններուն, սակայն Աստուած մի
արասցէ, ոճրին գործադրութեանը

ինքն ալ գաղափարակից գտնուած է
սկզբունքով, եւ իբրեւ գաղափարա-
կից, խորհրդակցութիւններուն ըն-
թացքին ու անոր հետեւանքին վրայ
տեղեկութիւն կ'ունէր Մինչեւ իսկ
ատոնցմէ Լիբա-Ռիբս և ամուսինը,
ինչպէս նաեւ անգամ մըն ալ Սամուէլ
Պայն ու աղջիկը, ու է խորհրդակցու-
թեամբ և կեղծիքով կը յաջողին
առուական հիպոտոսարանէն յանձ-
նարարագրել ձեռք անցնել, որոնց
չնորհիւ Սէլամուրքի բարձր հանդէսին
տոթիւ օտար հիւրերու, յատուկ
բարձրաւանդակին վրայ կը գտնուին
մէյմէկչանգամ: Հոն կը գննեն թէ
կարելի՞ է այդ տեղէն պոմպա նետել,
և հասկնալու համար թէ երբ արդիւն-
ները իրենց մէջ կը կրած և ի տ ի -
ք ի՞նչ կ'ուզուած պայուսակներուն
մէջ պոմպա գետեղելով հոն փոխադ-
րեն, պաշտօններուն, ուշադրու-
թիւնը պիտի գրաւեն՝ թէ ոչ: Օր-
Րուպիմա եւ Տիկ. Սոֆի իրենց իր-
տիքիւ և պոմպա ստիկներուն մէջ ան-
պէտ թաշկիծակներ լեցնելով կուռից
նեն զանոնք և այսպէս նկատելով որ
իրականութեան մէջ անոնք այժմ չը
պիտի գործեն և իրենց ձեռքակալ-
ութիւնը հնարաւորութեան հետեւ է,
հետեւեալ յարմար կը տեսնեն պոմ-
պան այն տեղին նետել: Սակայն,
բարձրաւանդակին վրայ երրորդ ան-
գամ գտնուել յաջողելու համար եր-
րորդ անգամ յանձնարարական պէտք
էր առնել հիպոտոսարանէն, ինչ
որ թէ՛ գծուար էր և ի՞նչ ետքը կըր-
նար ուշադրութիւն գրաւել: Մնաց
որ, անձամբ տեսած էին թէ Վեհ
կայսեր անցնելէն առաջ ճամբուն
վրայ առաջ կը ցանուէր ուստի երբ
պոմպան գետին նետուէր, կակուղ
աւազի պիտի հանդիպէր, և իրենց
ձրագրած ոճիրը ազդեցութիւն չպիտի
ունենար:

Ժողովս յայտարարեց նաեւ թէ իր
տան մէջ Սամուէլ Պայնի նախագա-
հութեամբ այս խորհրդին վրայ երկու-
րտուեալ խորհրդակցութիւններ տեղի
ունեցան, ուր որոշուեցաւ եղեռնա-
կան արարքը կատարելէ առաջ, գոր-
ծածուկներ պոմպաներով փորձել կա-
տարել, և համ սգծոխային մեքենայ
(մաշին էնֆէրնալ) ըստած տիւնամիթի
մեքենաները պատրաստելով եւ զայն
կառքի մը մէջ դնելով բարձր վայրը
մտցնել: Սամուէլ Պայն այս մտադ-
րութիւններէն ո՛ր մէկին գործադրելի
ըլլալը խորհրդակցութեան առարկայ
ըրաւ: Լիբա Ռիբս տիւնամիթի մեքե-
նան կառքին մէջ դնելու կուսակից
գտնուելով, թէեւ այդ գաղափարը

պաշտպանեց, սակայն ամբաստանեալ
պիճիացի ժողով գաղափարին ճշգու-
թեամբ եւ արագութեամբ գործադ-
րուելու պահանջներու եպերելի նպա-
տակով յարմար տեսաւ պոմպաները
բարձրաւանդակին վրայէն նետել եւ
այս մտք իր եղեռնական գաղափարը
յայտնեց: Խոստարարական բուն
մարմինը որ միաձայնութեամբ որո-
շած եւ վճռած էր Պոլսոյ մէջ եղեռ-
նական արարքը սարքել, անոր բուն
գործադրութիւնը յանձնած էր Պոլսոյ
յեղափոխական մասնաճիւղին, իսկ
խոստարարական գործերուն վարչու-
թիւնն ալ յանձնած էր Սամուէլ Պայ-
նի: Հետեւեալ, այս խորհրդակ-
ցութեան պահուն յայտնուած տար-
բեր կարծիքներէն բարձրաւանդակին
վրայէն պոմպա նետելու գաղափարը
նախընտրած էր Սամուէլ Պայն, սր
պոմպաներուն պահանջուած կատարե-
լութիւնները անձամբ փորձելու եւ
գործնականապէս գտնուելու պահանջ-
ուած վիճակին հասցնելու համար,
անցած Հոկտեմբերի առաջին օրերուն
աղջիկը նկատուած Բուպինա Պայնի
հետ մէկտեղ Պոլսէն հեռանալով Սո-
ֆիա գացած եւ հոն, ինչպէս պաշ-
տօնական քննութիւններն ալ զրա-
պէս հաստատեցին, Սօֆիայի մօտ
Պայնի ճիշդ գիւղին մէջ, այս գաղա-
փարով փորձելու կատարած պահուն
թէ ինքը եւ թէ իրեն ընկերացող
Վասիլապուր Գեօրջի հետ սպաննուած
են, իրենց իսկ կատարած պոմպանե-
րու եղեռնական փորձին պահուն:
Այս զէպըր թէեւ ճշմարտապէս խրատ
մը ըլլալու չափ բարոյական ազդե-
ցութիւն մը ըրած է յեղափոխական-
ներուն վրայ, սակայն այս սպան-
նուողներուն միւս ընկերները զարձ-
եալ շարունակելով իրենց գաղափար-
ները յարատուած են անոնց մէջ:
Այս միջոցիս այսինքն անցած Մար-
տի 8-ին ժողովի Բարիզէն հեռագիր
մը հասած էր որ Սամուէլի եւ Վասի-
լապուրի կը ծանուցանէր: Ասոր
վրայ յեղափոխական գործերու վար-
չութիւնը ստանձնեց Լիբա Ռիբս, որ
արդէն կը պնդէր յիշտոխային մեքե-
նայ՝ ըստած ստոկոլի պայթուցիկը
կատարելու մէջ զնելով Սէլամուրքի բարձ-
րագոյն վայրը մտցնելու գաղափարին
վրայ, հետեւեալ հիմա իր ծրագ-
րած գաղափարը գործադրութեան
դնելու շար զիտաւորութեամբ կնոյր
հետ մէկտեղ անմիջապէս հեռացաւ
Պոլսէն Երկու եղեռնագործ ամուսին-
ները նախ Սօֆիա գարին ուր Սա-
մուէլ Պայնի եւ Վասիլապուրի առ-
կախ ձգած ինչ ինչ գործերը կար-

գաղափարէ ետք, Վիեննա անցան, Հոն
Լիբա Ռիբս իր կնոյ ըուն անուան,
տոյսինքն Մարի Զայն անուան 5,000
ֆրանք արժէքով ծանօթ կառքը
յանձնարարեց և Պոլսոյ բերել տուաւ
զայն ինչ որ պաշտօնական քննու-
թեամբ եւ խոստովանութիւններով
յայտնուած է:
Երբ հարցուեցաւ ժողովի թէ,
Վասիլապուր Գեօրջի հետ ինչու հա-
մար անցած Մարտին սկիզբները հե-
ռացաւ Պոլսէն ժողովս պատասխանեց,
— Անցած տարուոյ Մարտին որոշ-
ուած էր միթիւնկ մը գումարով Հայ-
Իրօջակ Քօմիթէին յեղափոխականե-
րէն որուն կեդրոնական վարչու-
թիւնը կը գտնուէր Ժընէվի մէջ: Պոլ-
սոյ յեղափոխական մասնաճիւղին կող-
մէ ալ որոշուած էր Վասիլապուրը
իրեւ պատուիրակ զրկել յիշեալ Մի-
թիւնկին: Վասիլապուրի պաշտօն
յանձնուած էր Միթիւնկին մէջ հայիւ
տալ Պոլսոյ յեղափոխական մասնա-
խումբի գործերուն նկատմամբ եւ
մանրամասնօրէն բացատրել թէ գա-
ղափարը գործադրելու համար ինչ
ձեռնարկներ եւ միջոցներ ըրած է
Պոլսոյ մասնաճիւղը եւ թէ անոր
գործունէութիւնը ինչ արդիւնք եւ
հետեւանք ունեցած է. եւ որովհե-
տեւ արարքին գործադրութեան
պայմանագրով կը մօտիկնար, Վասի-
լապուր Միթիւնկին մէջ պիտի յայտ-
նէր թէ զոն ինչ կարգի զգուշու-
թիւններու եւ գործողութեանց կը
կարօտի գործին կատարելագործուելու
ասկէ զատ Վասիլապուր հայիւ պիտի
տար նաեւ Պոլսոյ քօմիթէին զրկուած
գործիներուն գործածութեան վրայ
Ուստի այս նկատումներով որոշուե-
ցաւ ժընէվի զրկել Վասիլապուրը որ
Սօֆիա երթալով հոն ներկայացաւ
Սամուէլ Պայնի երբ անկա փորձեր
ընելու կը գրազրկ հոն: Վասիլապուր
թէեւ ուզեց Սամուէլ Պայնէ ալ հե-
րահանգներ առնել սակայն այս վեր-
ջինը իր քով վար գրաւ Վասիլապուրը
որպէսզի իր կատարած փորձերուն
հետեւանքով պոմպաներուն վրայ
ձեռք բերուած կատարելագործումիւ
րուն աստիճանն ու եղանակներ անոր
ցուցնէ: Բայց վերջին փորձին պա-
հուն պոմպաներէն մէկը Վասիլա-
պուրի ձեռքին մէջ պայթելով եր-
կուքն ալ սպաննուած են, Ռիբս ա-
մուսիններ որոնք իրենանկան ա-
րարքը կը հետապնդէին և այս նպա-
տակով կառք մը պատրաստու համար
Վիեննա գացած էին այն տեղէն եր-
կու քրօն օմէթի ժամացոյց զը-

Գ Ր Ե Ծ
ՕԳՏԱՎ ՍԻՆՊՈ
— — —
ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ
— — —
(Թարգմանուած Ֆրանսերենէ)

Հայր Բանֆիլ մէկ մասէն միւսը,
մէկ շինուածքէն միւսը քշուելով՝ ճա-
թած ձեղունի մը, իր վրայ փչելու
մօտ միջոցով մը սպառնալիքին տակ
ապաւինած էր փոքր տաղաւարի մը
առաջին յարկը, որուն երեսարանի մը
միջոցաւ կրնար հասնիլ: Վասն զի
սայտատան տեղ ծառայող գետնա-
յարկը սանդուխ չուէր: Անիկա հոն
փոխադրած էր իր փայտէ մահճակա-
լը, սեղանը, աթոռը, խաշուութիւն

նը եւ Ս. Ժան, որ Մաթայի կենդա-
նագիրը: Հոն կը շարունակէր ուտել
պտուկ մը ազուրը. ճենճոս Գուրի
գարշակոտ եւ լորճուկ խառնուրդ մը
զոր յուններն իսկ պիտի մերժէին:
Հոն ալ հովը ներս կը խուժէր ա-
պակեզուրկ պատուաններէն. անձ-
րեւը կը կաթկթէր մազի մը պէս
ձակձկած տանիքէն: սակայն պատե-
րը հաստատուն էին, եւ ասիկա բա-
ւական էր:
Մնաց որ, վանականը միջակ ու-
շադրութիւն մը միայն կրնայէր այս
բաներուն, հետզհետէ աւելի յարչ
տակուած իր սեւեռակա գաղափար-
վը, տոյն է իր եկեղեցին:
Իր եկեղեցին, անգամ մը հանգանա
կութիւնը յաջողէր: Վանքին մէջ
իր գաղափարներուն միջոցին ծառայեց
եւ սպառնչ գործունէութիւն մը կը
վատնէր, մատուաին շուրջ, որուն

տեղը, բարձր խոտերով ծածկուած
այլեւ չէր տեսնուեր իսկ: Հիմունք-
ներու մէջ բրիչի առաջին հարուածը
տալ գետ չը խորնած, կը գնէր մե-
ծագանգուած քարեր, կիւր, կրաղիւս,
որոնցով բակերը լեցուն էին, եւ
նաւարանի մը ճեղքակրակ երեւոյթ
ները կ'առնէին:
Երրորդ կողմերը հասնէին, հայր
Բանֆիլ կը խուժէր գէպի ձիերուն
զրուխը:
— Հոսկէ՛. . . հոսկէ՛. . . Ա՛հ, ինչ աղ-
ուոր քար. . . ա՛հ ինչ սքանչելի կիր. . .
ա՛հ, ինչ պատուական կրաղիւս. . .
հի՛ւ, տի՛հ:
Եւ կը կոխէր լծակներուն վրայ.
վեր կ'առնէր խորտակները. իր պե-
ղած փոսին մէջ կը թափէր կիրը,
քարաղիւսին պարկերը կը թոթուէր
պոռալով սղու մը սրտածովիկ ու-
րախութեամբ՝ զգործը կը պալէ կոր. . .

առաջ կը լիթայ կոր. . . Եւ խօսքը
սայրապաններուն ուղղելով՝ Ա՛հ, բա-
րեկամներ. . . աղէկ է. . . Մատուաին
ինքնութեան օգնած պիտի լիթաքա-
րուք սղնիւ մարդիկ էք. . . Աստուած
ձեզ պիտի օրէնէ. . .
Բնականաբար, ինչպէս որ փայտը
փատած էր, այնպէս ալ քարերը սա-
կեցան, կիրը, անձրեւէն հալեցով
վազեց, կրաղիւսը քարագաւ պարկե-
րուն մէջ, Մէկ քանի անվթար շի-
նուածանիւթիւրուն մեծագոյն մասը
անհետացաւ, գիշերը աւարտու-
ներէն տարուած ըլլալով, Այս կո-
րուստները չէին թուլցնել իր արի-
ութիւնը: Այս գծարխտութիւնները
չէին նուազեցներ իր վստահութիւնը:
Ան կը գահանար գուարթօրէն բա-
լով՝ «ատոնց սեղը պիտի գնենք»:
Նոյնպէս երկար խորհրդակցութիւն-
ներ կուրենար ճարտարագետներու

նեցին որ վարկեանները ու երկ-
վարկեանները կը ցուցնէր: Այս
ժամացոյցները Գարլ Իվանովիչի
յանձնելու համար Պօլիս Ժօրիսի զր-
կեցին Յետոյ Մայիսի վերջերս Րիբս
եւ կինը Վիլենայէն Պօլիս գարով:
նախ քանի մը օր Ռուսոյ օթելը
մնացին եւ յետոյ Բերա. Հաճօրու լօ-
չուկային գէտ Տիկին Աննաի թիւ 12
տան մէջ յարկարածին մը վարձեցին
հոս 15 օրի չափ կենսայէն ետք Վոս-
փոր երթալու պատուակով ելան եւ
ո՛ր երթալին ո՛չ մէկուն զգացու-
ցին: Բայց ամբաստանեալ Ժօրիսի
անձնական միջնորդութեամբ Բերա,
Ճէզայիր փողոյ իր բնակած Ռատովիչ
արարի՛րմանին կից եւ նոյն Ռատովի-
չի վարձակալութեան տակ գրու-
նուած առանձին փոքր տուն մը փո-
խադրուեցան ուր ամէնընին մէկանց
կատարեցին բուն իսկ դէպքին վե-
րաբերեալ գոյժողութիւններն ու
ձեռնարկները:

(Շարունակելի)

ՆՕԹԵՐ

Թէ կեանքը հզօրագոյնին կր պատ-
կանի՛ր բնական օրէնք է: Այս օրէնք-
քին երթակայ են ամէն էակներ,
անոնք ամէն օր պէտք է պայքարի
պահելու ու պարպանելու համար Ի-
րենց էօթիւնն ու զիրքը: Թոյլերը
դատաւարութեամբ են կորուսելու:
Օգն ու յոյսը՝ ինչպէս հարկաւոր է
քաջընկու համար կեանքի, սննդի
ալ հարկաւոր է անհատի մը համար
անսեսական ոյժ՝ հասարակութեան
մէջ պահպանելու համար իւր գրու-
թիւնը:

Նպատակն չէ միտքի բարդ հար-
ցերու մէջ, այլ հարեւանցի ակնարկ
մը նետել՝ վառնայարմակ հայութեան
արդի կացութեան վրայ, յիշելով
միայն՝ երբեմնի նրա գրութիւնը:
Պուրկարիոյ ազատութիւնն ստալ,
Վտանայի մէջ սիրող ու տնտեսապէս
ուժեղ համարուող դատակարար եղած
է հայութիւնը: Այս անժխտելի է
ատր համահաւատարմ ճշմարտութիւն
է միանգամայն անօր այսօրուան կո-
րած վիճակը. իօսքս բնիկ Վտանա-
ցիներուն է:

Թուրքիոյ տիրապետութեան ժա-
մանակ թուրքը անընդունակ վաճա-
ռակաւորութեան, զուրկ մարդու,
մարդավայել բազմանքներէ, հետե-
ւած է միշտ պաշտօնէն թեան, եւ ու-

րիչին հաշուին կերակրուելու սովո-
րած, մտածած է յագեցնել միայն
իւր անանական զգացումները:

Պուրկարները ցանցառ, իրենց կը-
րած հալածանքէն ու տառապանքէն
յուսանաւորու ստիպուած յոյները
իրենց զիրքով կղզիացած. հայերը
միայն եղած են հալածող ու հալած-
ուած տարրերու միացման գիծը ու
աւելի վաճառականութեան ու արհես-
տիչ հետամուտ:

Եւ սակայն չեն կրցած յաջողիլ,
եւ իրենց մեղաւաճառ ընել սոյն աս
պարէզը. եւ ինչ հարստութիւնն որ
ձգած են ձեռք, եղած է խաբար-
յութիւնով եւ կամ աւելի լաւ՝ վա-
յելիւով թուրք մեծաւորի մը հովա-
նաւորութիւնը:

Ապրուստին աժան, ընկերական
պահանջները ոչինչ, չիրքերնին քիչ
թէ շատ ապահոված, եկած է մի
վարկեան ուր տիրած է անչարժու-
թիւնն եւ անգործութիւն:

Վարակուելով տիրապետող տար-
րերէն, երբեմնի աշխոյժներն թուա-
ցած, անհոգ ընտանեկան կրթու-
թեան, յանձնելով զիրենք ստեղծ-
ուած հոսանքին, քիչ քիչ իրենց ամ-
բողջ հոգսը եղած է ապրիլ ֆիզիքա-
պէս միայն:

Ստեղծուեցաւ ազատ Պուրկարիան,
Յեղաշրջուեց ընկերական կազմակեր-
պութիւնը: Ազատ գաղափարներ,
նորանոր ձգտումներ եկան երեւան,
Նիժնի ու կազր, ընկերական բարքե-
րը սկսան փոխուիլ, ճնշուած դասա-
կարգը իւր վայելած ազատութիւնով
նետուեցաւ հրապարակ, ետանդով ու
աւելնով ձեռնարկեց գործի. կինն
ալ զուրկ չը մնաց, նա ալ ունեցաւ
իւր դերը այս շարժումի մէջ՝ հրա-
պարակ իջնելով ժամանակին ձգտու-
մներով:

Այս գործունէութեան շրջանին մէջ
արթուն գտնուեցան պուրկարներն
ու յոյները, նրանք բնաւ չը շլացան
ու չը շուարեցան:

Պրապաճը յոյն տիկինը ստիպեց իւր
ամուսինը նոր նոր գործերու ձեռ-
նարկելու, կարենալ գոհացնելու հա-
մար իւր ընտանիքի պահանջները:
Մնաց միայն շուարած հայը. նա
սկսաւ տեղի տալ՝ փխտանակ սթափե-
լու եւ ճնշել նորածինները, նա ան-
փոյթ, կուրացած շարունակեց նախ-
կին շաւիղով:

Անցաւ երկու երեք տարի, գոր-
ծերը սկսան կաղալ, պահանջները
չատանալ, ինչ որբաւ հայ տիկինը.
ի բնէ անտեսազէտ շափեց իւր պա-

հանջները ամուսինին շահին վրայ,
որոշեց ենթարկուիլ ու ենթարկել
իւր զաւակները ամէն տեսակ զըր-
կանքի: Սակայն եկաւ վարկեան մը
որ այլևս անկարելի եղաւ իրեն հա-
մար յարատեւել այդ ճամբով. երբեմ-
նի իւր արհամարհած գրացուհին սկը
սաւ պնդիլ, զաւակները նախուճ
գարնան ծաղիկներու պէս հագցնել,
ու վերադարձուց նրա արժանապատ-
ուութիւնը:

Կամայ սկսեալ հայն ալ ինկաւ
ստեղծուած նոր հոսանքին մէջ, սա-
կայն շատ ուշ էր. վաստակը նուա-
զած, պահանջները բարդուած էին ու
ինք զատապարտուած էր կորսուելու
եւ կորսուեցաւ:

Մեր բնիկ երբեմնի հարուստ դա-
սակարգը ո՛ճ իր գործեց իրեն հա-
մար ամօթ սեպելով իւր գաւակները
աշակերտութեան տալը, կոտուելու և
կոփելու գանձը վաճառականութեան
մէջ, ըմբռնել տալու աշխատութեան
քաղցրութիւն, վաստակին հաճոյքը.
գարգացնելու նրա մէջ յառաջդիմու-
թեան ոգին, բարձրին ձգտումը:
Ընդհակառակը վարժեցուց զանոնք
գատարկաշրջութեան, անգործունէ-
ութեան՝ իւր հարստութեանէ հոգալով
անոնց ամէն պահանջները:

Ինչ եղաւ հետեւանքը. ընտանի-
քի մը հօր մեռնելով՝ մեռաւ անոր
օճախը եւ հարստութիւնը:

Ու այսպէս ամբողջութեամբ կորան
երբեմնի տեղացի հայոց հարուստ դա-
սակարգը:

Վտանայարմակ հայրուստ աններե-
լի սխալներէն մին եղած է միան-
գամայն, բարդը ընտանիքի ամբողջ
հոգը իւր նորահաս զաւկին վրայ,
առանց տգնելու նախապէս ապահովել
անոր գիրքը քիչ թէ շատ: Սխալ ըմ-
բռնում եւ շարաշար գործածում որ-
դիական պարտականութեան:

Եւ սակայն դարձեալ չզգաստա-
ցանք եւ կը շարունակենք հետեւիլ
նոյն շաւղին:

Իսկ հիմայ Վտանայարմակ պատա-
նակութեան մոլութիւնն է դարձած
պաշտօնէութիւնը:


Պատանի մը որ դիտէ այդ ու բն
անպատճառ պաշտօնեայ մը ըլլալ կը
ձգտի, չիք հագնիլ ու շուայ ապրիլ:

Սխալ ըմբռնում. պաշտօնէութիւնը
չէ որ կապահովէ անհատի մը զիրքը
ընկերականութեան մէջ. պաշտօնէ-
ութիւնով կարելի չէ ապահովել ա-
պագայ կեանքը: Պաշտօնեան ծախ-
ուած մարդ է. նա գատապարտուած
է փճանալու:

Ուշաբուրեցէք, մտածեցէք ու
մտածեցէք, եւ փոխանակ պէրասի-
րութեան ձգտելու՝ ձգտեցէք բարու-
քել ձեր ընկերական դրութիւնը,
ստեղծել անկախ զիրք, վարժուեցէք
անկախ մտածել, ձեր կամքը յար-
գել տալու միջոցներ ստեղծել, ըմ-
բռնել համապարտութեան ոգին, ե-
թէ կուզէք ապրիլ որպէս մարդ:

2.

ՏԵՍԱՐԱՆՆԵՐ ԳԻՒԻՎԱՑԻԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐԻՑ



Սարատովի կոտորածներին ու թա-
լանի սոսկումները աղօտանում են
այն բոլորի առաջ, ինչ որ կատար-
ուած է ամբողջ նահանգի գիւղերի
մէջ, Երկաթուղու գծի երկարու-
թեամբ գրեթէ կիրսանովից մինչեւ
Սարատովի ամենամօտ կայարանը՝ չէ
մնացել ո՛չ մի ազարակ, Երեւո-
թիւնները բոլորը վառուել են, միջի
եղածները՝ կողոպտուել: Գիւղական
բոլոր ճանապարհները ցանուցրիւ
ճածկուած են կողոպտած իրերով ու
փախցրած հասցահատիկներով: Ի-
րանք—կալուածատէրերը, հրդեղից եւ
թայանից մաշպուրծ ամեն ինչից
փախնում ապաստանում են երկա-
թուղու կայարաններում եւ կամ մօ-
տակայ քաղաքները ձգում իրանց:
Ամբոխի սանձարձակութեան չափ ու
սահման չկայ, Հարբած, զազանացած
գիւղացիները՝ հարստ ի կի նուա-
գածութեան տակ պարուծ էին թա-
լանուած տան առաջ եւ աննպատակ
մորթած տաւարների արժան գետի
մէջ, Ականատեսները պատմու՛ւ են,
որ թալանողները ուղղակի գազն
կարած՝ մորթած անասունների հում
միսն էին ուտում...

«Սարաղով լիտօք» թերթի թըղ-
թակիցն է որ ակնատես՝ պատմում
է այդ բոլորը:—

«Չե՛մ կարող պնդել—շարունակում
է նա—սակայն տեղացիներից լսեցի,
որ գիւղերում ինչ որ նշանազգեստ
հաքած մարդիկ էին շրջում եւ զըր-
դում էին գիւղացիներին՝ ոտքի ել-
նելու ու կոտորած, հրդեհ սկսելու.
որ թագաւորը հրամայել է թալանել
ամեն ինչ, քարուքանդ անել երկի-
րը... Սակաւահող գիւղացիների շարժ-
մանը մասնակցում են նաեւ շատ հող
ունեցողները հարուստները... Գիւ-
ղացիների վայրենութիւնը այն աս-
տիճանի է հասնում, որ նրանք թա-

եւ ձեռնարկուներու հետ, որոնք ա-
ռաջին վարկեանէն հասկցած կին
հայր Բանֆիլի խելագարութիւնը եւ
զայն շահագործել ուղղով՝ ամենէն
այլանդակ յատակագիծերը կատարու-
կէին անոր՝ անօգուտ ծախսերու
զուա կը բանային եւ կը մոլեցնէին
զայն կողոպտել մրցակցաբար: Չա-
փելով, խորանարգելով, խոշոր գեղ-
նած թուղթեր պարզելով ուր երկ-
րաչափական պատկերներ գծուած է-
ին, անոնք կը քալէին. քարի գան-
գուածներու կամ թէ սատակներու
մէջտեղէն, բազմազարդ փոշոտ եւ
խորախորհուրդ:

Լայն ժևթով մը, օգին մէջ կու-
րու ազնէին բարեբունական ճարտարա-
պետութեան ծրագիրները. իրենց
մատերուն ծայրին վրայ կը գործ-
դարձէին մայր եկեղեցիներ. եւ հայր
Բանֆիլ, գիրքը ձեռքը, պատմա-

կան բացատրութիւններ կուտար:

—Տեսնե՛ք, պարոններ, մենք չի
պիտի ստեղծենք.. պիտի վերաշի-
նենք... Բոլորովին տարբեր բան է
ասս Կեցէ՛ք, հոն, մայր խորան կար...
քանջակուած քարէն. երեսուն եր-
կու պատկերներով... եւ ի՛նչ պատ-
կերներ. գլուխ գործոց մը, շուն,
խորանին ճակատը... ոչ այնքան հին
եւ խիստ չքեղ... պորփիրէ... Լուի
մի՛ն մէկ ընծան:

—Պորփիր, կըսէր ձեռնարկուէն,
Աղէկ՛ ըսիք, ես կտոր մը ունիմ որ
ձեր գործին շատ աղէկ պիտի գայ...
եւ թէ՛ աղէկ եւ թէ՛ աժան:

—Շատ լաւ... զրկեցէ՛ք... կատ-
նեմ... Հոն վանականներու նստարան,
ներք... կալնեփայտէ... հրաշխքները:
Ամէն բան կը գնէր, որովհետեւ
երբ այլևս չէր մարտ, կը վերկտա-
նար իր միամտի անըմբռնելի ան-


մեղու թիւնը:

Եւ յետոյ նորէն ճամբայ կելլար:
Հետզհետէ ան թափառեցաւ Ծրան-
սա, Սպանիա, Իտալիա, Աւստրիա,
Փոքր Ասիա: Ամէն կողմ հզօր յարա-
բերութիւններով կը շրջապատուէր,
քաղաքական ազդեցութիւններ եւ
աշխարհիկ պաշտպանութիւններ կըս-
տեղծէր. զորս գիտէր շահագործել
զարմանալի ճարպիկութեամբ մը:

Օր մը, կընդունուէր հողմայեցի
կարտինայի մը զղեւակը. որ անոր կը
յանձնէր գաղտնի պաշտօն մը, ուրիշ
օր մը շոգնաւում կերթար, ընկե-
րակցութեամբ վաչկատուն դերասան-
ներու խումբի մը, որոնց հետ նա-
ուեն մէջ ներկայացումներ կը կազ-
մակերպէր, հասոյիւղ գրպանելով,
եւ կամ նոյն իսկ, անիկա կը բա-
նուէր աւազակներէ որոնք զինքը կըս
տիպէին իրենց ընկերաւորու մայրա-

պետներու վաճառք մը թալանին հա-
մար, եւ զայն կը ճամբէին, աւա-
րէն իրեն ինկած բաժինը ձեռքը տա-
լով. մերթ գուգազ մերթ անպա-
րարի օգնական, մերթ լրտես,
մերթ միսիօնար եւ միշտ մաւրացկան,
Հայր Բանֆիլ, երեսուն եւ հինգ
տարի շարունակ, ոտմանդիկ բախ-
տախտիկ մը թիւր մարմնաւորեց,
վարժ ամէն կերպարանափոխութեանց,
պարաստ ամէն գործերու. միայն
թէ անոնք առատօրէն վճարուած ըլ-
լային, ձկուեցութեան, նուաստու-
թեան ուժով. հինգ հարիւր հազար
ֆրանքի անհաւատալի գումարը զիջեց
Եւրոպայի մեծ ճամբաներուն վրայ,
ուր անիկա քաջբեց իր պատմուճա-
նը:

(Շարունակելի)



լանում, հրգեհի են մատնում նոյն իսկ իրանց գիւղերը:

Մալինովկա գիւղում, 50-60 գիւղացի, որոնք գլխաւոր ագիտատորներն էին, ներս են մտնում եկեղեցի, պղծում պատկերները եւ ուղում են մի կողմը սեղանի վրայ...

Գիւղացիները մի ուրիշ մաս յարձակում է դրանց վրայ եւ մի առ մի մորթում, Գիւղերը մինչեւ այժմ մնում են ընկած ու անթաղ...

Երբօրէի, Ս. Գեորգի գիւղից 6 վերստ հեռու, գիւղացիները վրայ են յարձակում 35 դրագուններ՝ առաջնորդուած մի սպայից. նրանց հետ էին նաեւ տեղական պրիստաւ Բարչիւկովին, երկու ուրեղնիկներ եւ կառուածատէր Սրապովիցիու կառավարիչ Վարանովը երկու ծառաներով:

Սկսեց մի սոսկալի ձեռք: Երեւում էին երկար ու անխնայ... խփում էին որտեղ հասնէր, բայց աւելի գլխին ու երեսին: Երեւում էին նաեւ Վարանովը ու ծառաները, Առանձնապէս նախանձարիւղի բերանց ուրեղնազնիկը, նախ ձիու վրայից, մտրակով սկսեց ծեծը, յետոյ վերարկուն հանեց, իջաւ ցած եւ բարբարոս ծեծի ձեռնարկեց, Աչքի էր խփում նաեւ Վարանովը, ուղղակի ոսքի տակ էր առնում գիւղացոց եւ կոչիկներովը շարժում, արորում... թիչ մնաց դանակով մորթէր մի գիւղացու: Վերջի վերջոյ երբ յոգնեցին, զբազունները սպան շարքով կանգնեցրեց գիւղացիներին, ստիպեց վազել եւ ինքը հետեւից, ձին քշելով հալածում էր ու անվերջ ձեռնում... իսկ Վարանովը գոռում էր.

— Խփէք այդ լրբերին, ձեզ փող եմ տւել, որ մի լաւ շարդէք զբրանց...

Անբախտ զոհերը, որոնց մէջ կային նաեւ 14-15 տարեկան մանուկներ— լալիս էին, աղաչում... եւ ընկնում էին կիսամեռ...

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ներքեակ սպանութիւն Սոֆիայի մէջ».— Փաստաբան Սվէթոչուր Տիմիթրով, որ քրոջը՝ Մարիքայի հետ կը բնակէր, վերջերս ապահովագրական ընկերութենէ մը ստացած էր 30,000 ֆրանքի գումարը, իբր հատուցում էտիր. նէի վերջին հրդեհէն ալ յարած այն խանութներուն, զորս ժառանգած էր հանգուցեալ քրոջմէն: Փաստաբանին կառապանը Վլատիմիր Սթոյանովիչ անուն երիտասարդ սերպ մը, մտադրեց սպաննել իր տէրը եւ տան միւս բնակիչները գողնալու համար նոյն գումարը եւ իր ուղածին պէս կեանք վարելու համար: Հետեւաբար, համաձայնեցաւ երկու դատարկապորտներու հետ, որոնց մին Սլովէն մըն էր 27 տարու Անտրէ Երմոլա անուն, իսկ միւսը մաճառ՝ 24 տարու, Պալինկ Եանօշ անուն, որ արհեստով երկաթագործ էր:

Հինգշաբթի իրիկուն Վլատիմիր իր երկու մեղսակիցները, կացինով եւ դաշոյններով զինուած, պահէց ախոռին մէջ:

Գիշերը, ժամը 4 ին, երբ Տիմիթրով վար բակը իջաւ, կառապանը կանչեց զայն ըսելով թէ ձին հիւանդացած է: Փաստաբանը, առանց վարանման, մուտ ախոռ, իսկոյն երկու շարագործները յարձակեցան անոր վրայ եւ դաշոյնի հարուածներով խոզխոզեցին զայն: Չոհր հազիւ կրցաւ ճիշ մը արձակել, ինկաւ գետին եւ մարգասպանները իրենց գործը աւարտեցին կացիններով: Ճան սպասուհին, որ գետն պառկած չէր, լսեց իր տիրոջ աղաղակը եւ իջաւ տե՛սնը: Թէ ի՞նչ կը պատահէր: Հազիւ բակ հասած էր, հէգ աղջիկը կացինի հարուած մը ստացաւ գլխուն եւ գիտապաստ գետին փռուեցաւ գանկը շարքով: Չոհր եղած: Մարգասպանները, ելան վերնայարկ եւ մտնելով փաստաբանին քրոջը Օր. Տարինքայի սենեակը, զայն իր անկողնին մէջ սպաննեցին, ջախջախեցին, առանց ժամանակ տալու որ նոյն իսկ շարժում մը կատարէ: Մեղսակիցները, վայրագ պաղարկունութիւնով մը իրենց այս հաճելի ոճիւրը գործելէ ետք սկսան տունը խուզարկել: Գարակները, կտրասիները, ամեն ինչ տակնու վրայ ըրին, բայց միայն գտան 30 ֆրանք, ժամացոյց մը եւ ոսկի մատնի մը: Մինչեւ լոյս, մարգասպանները, կատղած այս ամուլ հունձքէն, որոշեցին այօրինակ ուրիշ ոճիւրներ ընել: Առտուն կանուխ, եղբանագործները Տիմիթրովի Մարի. Լուիզ փողոցին գրասենեակին մէջ գրուած գրամարկիւն բանալիները առած, հոն գացին, մտածելով խեղճել այն աղջիկը որ կը ծառայէր փաստաբանին քոյլ, իբր գրելու գործիքին պաշտօնեայ: Եւ բանալի գրամարկիւր: Բարբաբազար, այս միջոցին, ոստիկան զինուոր մը կը պատէր գրասենեակին առջեւ: Մարգասպանները իզուր փորձեցին աղջիկը հեռացնել հոնկէց, պատրուակով մը, քանի որ այդ պահուն կարելի չէր սճիբը գործել: Ուստի մեկնեցան եւ ալ չերեւցան: Կէսօրէն ետք տաճը երեւան ելաւ եւ ոստիկանութիւնը անմիջապէս ձերբակալեց երկու մարգասպանները, Անտրէն եւ Պալինկը, ինչպէս նաեւ գլխաւոր սպանիչ կառապան Վլատիմիրը:

— Պուլկարիոյ Պոլսոյ գործակատարը Մ. Նաչէվիչ մտադրութիւն յայտնեց կառավարութեան վերանորոգել թուրքիոյ եւ Պուլկարիոյ միջեւ գոյութիւն ունեցող առևտրական համաձայնութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլիս 1 դեկտ.— Տաճկաստանը պարսկաստանէն բաժանող սահմանը Մուսուլի նահանգին ծայրը, ոչ մէկ ժամանակ որոշակի վրձուած է եղեր: Հոն կայ բաւական լայնածաւալ տարածութիւն մը, որու վրայ կը վիճեն երկու կառավարութիւններ: Այս տարածութեան վրայ կամաց կամաց գաղթած են պարսկական ցեղեր— թրքական կառավարութիւնը այս գոյութենէ զգաւտացած, բողոք մը ուղղած է պարսկական կառավարութեան: Վերջինս Պոլիս ուղարկած է փոխանորդ մը որ պահանջէ առանց ունէ վէճի մը վերոյիշեալ երկրը թրքական կառավարութիւնը պատասխանած է թէ երկրը իրեն սեփականութիւնն է, թէեւ թուրքիան խուսափած է գրաւել զայն, այս խուսակցութեանց ժամանակ:

Հիմայ յայտնի կըլլայ թէ, պարսկական զինուորները մտած են վերոյիշեալ երկրի մէջ, ինչպէս նաեւ Էրզրոնկեանի սահմանագծին մէջ, ուր 4րդ. բանակին, գլխաւոր բանակատեղին է, հոն ուղղուած են եւ թրքական զինուորներ, նրանք 21 գունդ հետեւակ զորք, եւ թնդանօթաձիգներ, հաւանական է որ այս երկու քիւն միջեւ պիտի ըլլայ ընդհարում, եւ այս անհանգստութիւն կը պատճառէ տաճկական շրջանակներու մէջ:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Պէրլին 1 դեկտ.— Բալխասկի մէջ պիւտեճէի քննութիւնը կը շարունակուի: Պէպէլ ճառ մը խօսեցաւ երկար, որով կը համեմատէր, Գեյմանիոյ քաղաքականութեան հետ:

Պիւլովը պատասխանեց հետեւեալ կերպով. «Մենք չենք հետեւիւր եւ ոչ մէկ յարձակողական ծրագրի Անգլիոյ հանդէպ, Չեզ կը հաստատուի ամենարուն կերպով թէ յիշուի չէ, եթէ մաշգրիկ կը մտածեն թէ Գեյմանիա վատ դիտաւորութիւն ունի, առկայ վերագրել է, Սոցիալ Տէմօկրատ կուսակցութեան իւր համաշխարհային քաղաքականութեամբ, մենք այս կը հասկնանք արուեստից, վաճառականութեան եւ նաւազնացութեան մէջ, ունենանք այն շնորհամեբը ինչ որ ունին միւս ազգութիւններ: Մենք ոչ մէկուն վրայ յարձակիլ կուզենք, բայց կուզենք զօրեղ ըլլալ, որպէսզի կարենանք ճշմել գրտէն եկած ամէն յարձակում: Ասկէց յետոյ իշխան Պիւլովը խօսեցաւ Սոցիալ Տէմ.

կուսակցութեան վրայ, զոր անխղճօրէն կը կռուի երկրի շահերուն դէմ, միջազգային ընկերակարականութեան մասնաճիւղերը շոյելու:

Նա աեարտեց իր ճառը հետեւեալ խօսքերով.— «Խօսքէ զոր ծի մի անցնիք, որովհետեւ պիտի տեսնէք թէ որքան սուղի պիտի նստին անոնք ձեզի:

Հ Ր Ա Ի Ե Ր

Հայկական բնթերցարանի վարչութիւն իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ ամէն անոնց որոնք իրենց նիւթ փկան աշակցութիւնները ցարդ չեն խնայած եւ որոնք շնորհիւ ընթերցարանս այժմ կը գտնուի նախանձելի վիճակի մը մէջ:

Սակայն վարչութիւնս թէ թանգարանին ճոխացման եւ թէ ընթերցարանի յառաջդիմութեան աւելի յաջող քայլեր անելու փափաքով ծրագրած է յառաջիկայ նոր տարիէն սկսեալ աւելի ընդարձակ վայր մը ընտրել եւ հոն իրական սեռի յատուկ բաժանում մը աւելցնել:

Ուստի վարչութիւնս իր այս փափաքը յաջողութեամբ պատկերու համար, որոշած է սարքել բնտանեկան շքեղ Պ. Ա. Մ. Ա. Ն. Գ. Ա. մը որ պիտի կատարուի յառաջիկայ դեկտ. 5-ին, երկուշաբթի գիշեր, ժամը 9-ին, ի սրահ «Պուլկարիան» ուր մեր յարգելի ազգայինք թէ զուարճալի ժամանց մը պիտի վայելեն եւ թէ միւս կողմանէ նպատած պիտի ըլլան ընթերցարանիս, որուն կարեւորութիւնը եւ օգուտները ծանօթ են ամէն հայու:

Լիալոյս ետք թէ՛ ամէն ազգային անհատ առանց բնկրկելու պիտի փութայ քայքայելով դմեզ

Այս ատիւ կանխաւ կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը:

Տոմսակները յայտարարել սկսեալ կը ծախուին «Հայկական» ընթերցարանը իսկ հանդէսի երեկոյին ի սրահ «Պուլկարիան»:

Վարչութիւն «Հայկական» Ընթերցարանի (Կնիք)

ՌԱՏԵՐԱԿԱՆ ԵՒ ԵՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Պ. Ս. Տոնկֆ Սօֆիայի Պուլկարիան Ազգային խմբի գերասաններէն եւ իւր առաջակարգ ընկերներուն կողմէ պիտի ներկայացնէ մեծաւ պատրաստութեամբ կը գեղեցիկ տեսարաններով Դեկտեմբեր ամսոյ մէջ

ՆԱՐՕ ԵՈՒ ՊՈՆԱԲԱՐԴ

Ձիւնուորական թատերախաղ 5 արար եւ 4 պատկեր, Հեղինակութիւն Ա. Ղէքոստոր Տիւմայի Ներկայացման որոշեալ օրը մասնաւոր յայտարարութեամբ պիտի ծանուցուի: Տոմսակները յայտարարել կը ծախուին Մուսուլա «Պրաքովի թղթավաճառատունը»

Ս Զ Պ

Գործադիր ժողովս յանուն թշուառ եւ տառապելներուն կողմէ իւր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ այն պատուարժան անձնուորութեանց արարեհաճեցան Աղք. ընկերութեանս հիտեւալները նուիրելու Տրք. Արմենակ Տամատեան 20 ֆր. ոսկի «Տիրան Յովհաննէսեան 5» իւր հանգուցեալ Աղաւնի տիկնոջ հոգւոյն համար:

Տիրար Ալիքան Թորոսեան 2 ֆր. ի դիմաց Գործ. Ժողովոյ Աղք. Ընկ. Վառնայի Ատենադպետ Ատենադպետ Ա. Ջարպահանէեան Սիմօն Սամուէլեանի (Կնիք)